№ 69 Ապրիլ 29 (Մայիսի 11) 1880 Ապրիլ 29 (Մայիսի 11) № 69

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Գաւառաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Մշակ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր կանանց առաջին քայլերը։—Ներքին տեսութիւն։ Կոմս Լորիս-Մելիքովի գործունէութիւնը։ Զօր Վիլիամ Դրէպէրի գրքի թարգմանութիւնը։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Նուխուց։ Նամակ Խմբագրին։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Սերբիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական խնդիր։

ՄԵՐ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Վերջին ռուս-թիւրքայ պատերազմից յետոյ մեր թէ Թիֆլիսի և թէ այլ քաղաքների հայուհիները, որոնք առաջ միշտ անտարբեր էին դէպի որ և է ազգային շարժում, սկսեցին հետզհետէ մասնակցել այդ շարժումներին։ Այլ և այլ հայաբնակ քաղաքներում կանայք փողեր էին հաւաքում յօգուտ «Արարատեան» ընկերութեան, պատերազմի ժամանակ Թիֆլիսի կանայք փողեր էին ժողովում յօգուտ հայ գաղթականների։

Այժմ, երբ սովը յայտնվեցաւ Հայաստանում, մեր տիկինները և օրիորդները անտարբեր չը մնացին դէպի իրանց եղբայրակիցների վիճակը։ Հայուհին ամեն տեղ հանդգնակութիւն է ժողովում, մասնակցում է կօնցէրտին, մասնակցում է մասնաժողովին, տնից տուն մտնելով փողեր է ժողովում, մասնակցում է սիրողների ներկայացումներին յօգուտ հայ սովատանջների և վերջապէս այս օրերս մեր հայուհիները խաղալու են ալլէգրի, յօգուտ Հայաստանի սովատանջների։

Չէ կարելի չուրախանալ որ վերջապէս հայ կինը սկսում է հասկանալ իր պարտաւորութիւնը, սկսում է հասկանալ որ ոչ մի ազգային, հասարակական շարժում կենդանի չէ լինի, մինչև որ մարդկութեան կէսը անտարբեր կը մնայ, մինչև որ մարդկութեան երկու սեռերն էլ չը մասնակցեն այդ շարժմանը։ Ամեն նոր վարդապետութիւն, գաղափար, հասարակական շարժում մեռած կը լինեն, մինչև որ կանայք հաւասարապէս տղամարդիկների հետ չը համակրեն այն նոր գաղափարին և վարդապետութեանը, չը մասնակցեն ընդհանուր շարժմանը։

Մենք մեր կանանց սեռից հրաշք չենք պահանջում,—մեզանից ոչ ոք հրաշք չէ գործում.... Թող միայն կատարեն իրանց պարտաւորութիւնը, և մենք գոհ կը լինենք և համոզված կը լինենք որ այսուհետև երբ կանայք տղամարդկանց հետ միասին ձեռք ձեռքի տուած միասին կընթանան ամեն ազգային, հասարակական գործերի մէջ, այդ գործերը անհամեմատ աւելի լաւ կը յաջողվեն, քան թէ առաջ, երբ հայ կինը սառնութեամբ և սպանիչ անտարբերութեամբ էր նայում տղամարդու բոլոր ջանքերի վրա։

Թող հասկանան մեր հայուհիները և այն, որ միայն այն ժամանակ կանայք միջոց կունենան ապագայում տղամարդկանց հետ հաւասար հասարակական իրաւունքները պահանջել, երբ իրանք էլ կը մասնակցեն հասարակական կեանքի ամեն օգտաւէտ շարժումներին։

Հրաւիրում ենք մեր Թիֆլիսի հայոց ամբողջ հասարակութեանը համակրութեամբ վերաբերվել դէպի մեր հայուհիներից յօգուտ Հայաստանի սովատանջների ձեռնարկած վիճակախաղը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՄՍ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Վիէննայի «Polit. Corresp.» լրագրի մէջ տպված է հետևեալը կոմս Լորիս-Մելիքովի գործունէութեան մասին։

«Կոմս Լորիս-Մելիքով շարունակ աշխատում է անցեալի մեղքերով հաւաքված աղբը մաքրել և Ռուսաստանի վերանորոգութեան համար հաստատ հող պատրաստել։ Նրա նախագծի այն մասը, որ ձգտում էր ամբոխի անբաւականութեանը վերջը դնել, այժմ իրագործման ճանապարհի վրա է։ 1874 թուականից սկված առանց բացառութեան, բոլոր հրամանները, որոնք կոչված էին դրացիների և ծնողների մօտ։ Այսպիսի դէպքերում, երբ մի տան վրա մեղադրանք է դրվում և նա գտնվում է զինուորների հսկողութեան ներքոյ, կնիկներին հեռացնում են տնից։

Տեսնելով այդ բոլորը, Վարդանը իր ընկերների հետ դարձեալ առաջին անգամից չը հասկացաւ, թէ ինչ էր նշանակում այդ խառնիճաղանճ ամբոխը։ Որովհետև տանուտէրի օդայում, որպէս ամեն մի հայ գիւղացու տան մէջ, զինուորների խումբերով օթևանելը՝ այդ երկրում մի սովորական բան էր։ Եւ ամեն անգամ, երբ գիւղացին այս տեսակ հիւրեր է ընդունում, միշտ ստիպված է իր հարևին, կնոջը և աղջկան, իր հիւրի կրքերից ազատ պահելու համար, գիշերը դրացու տունը ուղարկել, եթէ հիւրը այնքան բարի կը լինէր, և իր սուրը տան տիրոջ կոկորդի վրա դնելով, չէր բռնադատի նրան, որ կնոջը տանը պահէ իրան հիւրասիրելու և ծառայութիւն անելու համար։

Հայրապետի եղբայրներից մէկը, հանդիպելով նրան, զայրացած կերպով ասաց.

—Տեսար, այն «պամպուլիկը» ինչ օյին բերեց մեր գլխին... հիմայ եկ, դիւանի պատասխանը տուր...։ Ես հէնց առաջին օրը, այն լակոտի վզակոթին տալով, դուրս կանէի մեր տնից, բայց դու սատանայի նման հակառակ եղար և չը թողեցիր...։ Հիմայ եկ, պատասխանը տուր...։

Հայրապետը ոչինչ չը խօսեց, նա հասկացաւ, որ եղբօր հայհոյանքները վերաբերում էին պ. Սալմանին։ Նա հասկացաւ տխուր եղելութիւնը...

—Մեր տղայ, մենք էլ ընկանք ծուղակի մէջ... ասաց նրան Վարդանը ծիծաղելով։—Այդ էր պակաս....

Իսկոյն մի քանի զափթիաներ մօտեցան, և նրանց բռնելով, տարան օդան, յիսնապետի մօտ։ Թոմաս էֆէնդին այնտեղ չէր։ Նա իր կարգադրութիւնները կատարելուց յետոյ, հեռացել էր, և այս գիշեր, որպէս հիւր, գտնվում էր գիւղի քահանայի տանը։ Օդայի մէջ, բացի ծերունի խաչօից և յիսնապետից, ուրիշ մարդ չը կար. միայն մի քանի զինուորներ կանգնած էին դրանը։ Վարդանը, ներս մտնելով, անցաւ և նստեց տանուտէրի մօտ, առանց սպասելու, որ թուրք ատիճանաւորը նրան թոյլ տար նստելու։ Հայրապետը և Ապօն մնացին ոտքի վրա։

Վարդանի վարմունքը յիսնապետին ծանր երևեցաւ և նա բաւական արհամարհական կերպով հարցրեց նրանից.

—Դուք որտեղացի է՞ք, հայ։

«Հայ» բառը գործ դրեց նախատական մտքով։

—Ռուսաստանցի, պատասխանեց Վարդանը զսպելով իր վրդովմունքը։

—Ի՞նչ գործով էք եկել այստեղ։

—Առևտուր եմ անում այս կողմերում։

—Անցագիր ունէք։

—Ունէի, բայց կորցրել եմ։

—Այդ հեշտ է ասուզել. դուք միայն ասեցէք, թէ սահմանագլխի որ մաքսատնից և երբ անցաք, մենք կը հարցնենք. այնտեղ ձեր անցագրի համարը և անունը գրված կը լինի։

—Ես կանդրադարձիստ եմ. այս արհեստով պարապվող մարդիկ մաքսատան չեն մօտենում։ Այն էլ կասեմ, որ ես հէնց առաջուց անցագիր չունէի։

—Այդ գուցէ ձեզ կը ներվէր, եթէ դուք միայն կանտրաբանդիստ լինէիք, բայց դուք մեղադրվում էք մի ուրիշ յանցանքով ևս։

—Ի՞նչով։

—Դուք լրտես էք։

—Ուղիղ է...երևի, Թոմաս էֆէնդին է հաղորդել ձեզ... իսկապէս նա չատ ճշմարտախօս մարդ է... ասաց Վարդանը հեգնական եղանակով։

—Այդ մի և նույն է, թէ ով է հաղորդել, պատասխանեց յիսնապետը, պահպանելով պաշտօնական մարդու սառնասրտութիւնը.—կասկածաւոր մարդիկ, մանաւանդ այս պատերազմական ժամանակներում, մենք մեր երկրում չենք թողնում։ Ձեզ այս գիշեր կը պահեն այստեղ և առաւօտեան կը տանեն զինուորական գործակատարի մօտ. նա կը կարգադրէ ձեր վիճակը։

—Ուրեմն ինչ հարկ կար այդ բոլոր հարցուփորձը անելու, երբ իմ վիճակը զինուորական գործակատարի մօտ պէտք է վճռվի։ Դուք կարող էիք հէնց սկզբից կալանաւորել ինձ և աւելի ոչինչ։ Բայց ձեր սովորութիւնն է։ Այստեղ վերջին զափթիան անգամ, երբ ուղարկվում է մի յանցաւորի ետևից, նա կատարում է այն բոլորը, ինչ որ պէտք է անէր բարձր դատարանը։

Յիսնապետը թէև վիրաւորվեցաւ, բայց ոչինչ չը պատասխանեց։ Նա կանչեց չորս զափթիաներ և հրամայեց, որ տանեն և պահեն Վարդանին։ Նա ամենևին ընդդիմադրութիւն գործ չը դրեց և թոյլ տուեց, որ կալանաւորեն իրան։

Վարդանին տանելուց յետոյ յիսնապետը դարձաւ դէպի Հայրապետը և Ապօն։

—Դրանցից ոչինչ հարցնել պէտք չէ, հրամայեց նա.—դրանց յանցանքը յայտնի է. տարէք, զգուշութեամբ պահեցէք։

Ծերունի խաչօն խորին թմրութեան մէջ, որպէս մի կիսաքուն և կիսարթուն մարդ, կարծես, երազի մէջ տեսնում էր այդ բոլորը։ Ինչու էֆէնդին խաբեց նրան։ Մթէ այդ բոլորը ձեի համար էր կատարվում, որպէս հաւատացնում էր էֆէնդին։

Վարդանին, Հայրապետին և Ապօին տարան և կողպեցին մի չինվածքի մէջ, որ ծառայում էր որպէս ցորենի ամբար։ Նրա յատակը և պատերը կառուցված էին քարից, կրով ամուր կպցրած միմեանց հետ, որ մկները չը կարողանան ծակել և ցորենը փչացնել. լուսամուտները նեղ էին և պատած ցանցատեսակ երկաթով, որ արգելում էին թռչունների ներս մտնելը։ Այս չինվածքը ամեն յարմարութիւն ունէր այս գիշեր բաւական ամուր բանտի փոխարէն ծառայելու։ Մի անկիւնում վառվում էր իւղային ճրագ և տարածում էր իր լոյսը ամբարի խաւար կամարների մէջ։

Հայրապետը և Ապօն լուռ էին, նրանց դէմքի վրա նկարված էր խորին յուսահատական տխրութիւն դառն զարհուրանքի հետ։ Նրանց յայտնի էր թուրք ատիճանաւորների անգթութիւնը, որ մի ամենաչնչին յանցանք պատճառ բռնելով, և չատ անգամ մեղադրութիւնները իրանք հեղինակելով, և արդարին յանցանքի մէջ զրպարտելով,—միշտ պատրաստ էին կեղեքել, մաշել և ոչնչացնել անմեղներին, մանաւանդ երբ նրանք հայ էին և փոքր ի չատէ ունևոր մարդիկ էին։ Իսկ այժմ յանցաւոր համարվելու համար բաւական ապացոյցներ կային։ Բայց որպէս յայտնվեցաւ, ով պէտք մատնած լինէր։—Այդ մասին նրանք մի որոշ կարծիք կազմել չէին կարողանում։

Վարդանը, կարծես, հանդիստ էր։ Նրա հանգստութիւնը նմանում էր մրրկածուփ ծովի խաղաղութեանը, որ տիրում է ալեկոծութիւնից յետոյ։

—Ես ձեզ մի առակով կը բացատրեմ բոլորը, ասաց նա իր բանտակիցներին.—Անտառի ծառերը լուր տարան իրանց թագաւորին, ասելով, թէ յայտնվել է մի գործիք, որ մեզ անխնայ կոտրում է։—«Ի՞նչպէս է կոչվում այդ գործիքը, հարցրեց թագաւորը։—«Ցապար, պատասխանեցին ծառերը։—«Ի՞նչպէս է կազմված նա, հարցրեց

Աշխարհագրական ընդարձակ հետազոտություններ Հարավային Կովկասում

Հարավային Կովկասի գիտական ընդարձակ հետազոտությունների մասին հրատարակվում է հետևյալ հանգամանքը։ Ինչպես հայտնի է, Հարավային Կովկասի գիտական ընդարձակ հետազոտությունները ստանձնել է Ռուսական աշխարհագրական ընկերություն

դպրոցի աշակերտներս ցանկացանք մի փոքր ինչ բանով կարեկից լինել յիշեալ սովալուկների դառն վիճակին, ուստի և կազմելով մեր մէջ մասնաւոր կերպիւ մի հանգանակութիւն, ժողովեցինք 58 ռուբլի 95 կ., որից դուրս հանելով 95 կ. փոստածախս, մնացած յիսուն և ութն ռուբլի զուտարը ուղարկելով սորա հետ նուիրատուաց անուանական ցուցակով ի միասին, խոնարհաբար խնդրում եմ, մեծապատիւ խմբագիր, մի անկիւն չնորհել սորան ձեր պատուական թերթի էջերի մէջում, իսկ դրամն հասուցանել, ուր հարկն է։ Ահա նուիրատուաց ցուցակը։ Բարաղամեանց Կարապետ 3 ր., Բարաղամեանց Աւետիք 1 ր. 50 կ., Բէշիշեանց Կարապետ 3 ր., Արաբաջեանց Յովհաննէս 3 ր., Կոռանեանց Արամ 2 ր., Կոստանեանց Կոստանդին 2 ր., Բարաղամեանց Արշակ 2 ր., Խրխռեանց Զոհրապ 2 ր., Կոստանեանց Լեոն 1 ր., Ղասապեանց Համազասպ 1 ր., Ղասապեանց Յարութիւն 1 ր., Թուխկեանց Ռուբէն 1 ր., Ղարիպեանց Մնացական 1 ր., Ղազարեանց Կոստանդին 1 ր., Սուլթանեանց Յարութիւն 1 ր., Սարգսեանց Լեոն 1 ր., Մնիկեանց Յարութիւն 1 ր., Վարդապարիկեանց Աբրահամ 1 ր., Տիգրանեանց Լեոն 1 ր., Ափոյեանց Գրիգոր 1 ր., Խոյեցեանց Համազասպ 1 ր., Սարգսեանց Յովակիմ 1 ր., Ղազարեանց Գէորգ 1 ր., Բաղդասարեանց Գրիգոր 1 ր., Խորենեանց Արամ 1 ր., Զաքարեանց Գրիգոր 1 ր., Խորենեանց Աւետիք 1 ր., Զինջիլաթեանց Բաղդասար 1 ր., Քանաբեանց Հայկ 1 ր., Խաչատրեանց Աւագ 1 ր., Իսահակեանց Արամ 1 ր., Աղաջանեանց Երուանդ 1 ր., Աքուլեանց Սեդրակ 1 ր., Բաղդասարեանց Կարապետ 1 ր., Ռափայելեանց Լիպարիտ 1 ր., Խրխռեանց Ստեփան 1 ր., Ղանթարճեանց Մկրտիչ 75 կ., Բունիաթեանց Գասպար 75 կ., Կուպարեանց Յարութիւն 60 կ., Պարսամեանց Լեոն 60 կ., Զաքարեանց Յակովբ 50 կ., Տէր-Յարութիւնեանք Համազասպ, Յակովբ և Սեդրակ 1 ր. 50 կ., Այտինեանց Յակովբ 50 կ., Գրիգոր Մկրտչեանց 50 կ., Սարիբէկեանց Հայկ 50 կ., Սարիբէկեանց Մուշեղ 50 կ., Յովհաննէսեանց Մկրտիչ 40 կ., Զաքարեանց Յարութիւն 40 կ., Բարաղամեանց Ղազարոս 40 կ., Նալբանտեանց Արամ 40 կ., Ստեփանեանց Յակովբ 40 կ., Սողոյեանց Համազասպ 40 կ., Իսահակեանց Մարտիրոս 40 կ., Վարոսեանց Յակովբ 30 կ., Մուրատեանց Մկրտիչ 30 կ., Ղանթարճեան Բազրատ 25 կ., Գինոսեանց Բալաբէկ 25 կ., Գինոսեանց Խաչատուր 25 կ., Բունիաթեանց Երուանդ 25 կ., Բիշարեանց Արամ 20 կ., Վարդանեանց Յովհաննէս 15 կ., Դանիէլեանց Կոստանդին 50 կ., Դանիէլեանց Գաբրիել 50 կ.։ Գումարն յիսուն և ութ ռուբլի։

Աշակերտ Զոհրապ Խրխռեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՅ

—

10 ապրիլի

Նուխում, ծուլութիւնը, անշարժութիւնը մի ընդհանուր կանոն է։ Եթէ այս 1880 թուականում ոչ մի նամակ չուղարկեցի «Մշակին» պատճառը այն է, որ և ես հնթարկվեցի այդ կանոնին։ Ծուլութիւնը և անշարժութիւնը այստեղ, ինչպէս ասացի, կանոն է և ընդհանուր։ Բնութիւնն անգամ չէ շեղվում այդ կանոնից. տեսէ՛ք ձմեռը իր մինչև այժմ չը տեսնված ցրտով, համարեա 1½ արշին ձիւնով վեր է ընկել գլխներիս և էլ չի ուզում դադ լինել, որովհետև ծուլանում է։ Մեր նոր ընթերցարանի լրագիրները այս է երրորդ ամիսն է գնում, որ ուղարկվում են հա, ուղարկվում, գալիս են հա գալիս Թիֆլիսից և էլի չեն ստացվում, որովհետև «ջուտը», այժմ դուրս է մօղայից... ծանր, ծանր, որքան կարելի է ուշ.... պիտի ծուլանալ. այս է այժմ կանոնը։ Այժմ ամենայն բան կարող է չը շարժվել, ոչ մի բանի խաղաղութիւնն անգամ չէ կարելի վրդովել, խիղճը, գութը, մարդասիրութիւնը, դատաստանը, արդարութիւնը, անաչառութիւնը (աւելի պաշտօնականների մէջ)—բոլորը, բոլորը հանգիստ, անվրդով կարող են ննջել իբր Մորֆէոսի ծոցում։

Նուխեցին իր վանեցի եղբորը, սովից՝ ժանտախտանման անխնայ սովից մեռնող եղբօրը՝ կարող է մի կտոր հաց չը մեկնել շուտով, քանի չունչը բերանումն է. ինչ անենք, ուշացնելը այսպիսի դէպքում աններելի և վտանգաւոր կարող է լինել. ինչ անենք թէ ուշացնելը իր այն միակ յուսատու քաջ, բայց այժմ նրա չար բաղդից հիւանդ՝ վանեցի եղբօր այն ամուր կազմուածքը կարող է փչրել։ Այդ անբաղդների համար փոքր ինչ եռանդ, շարժողութիւն է հարկաւոր, գիտեմ, իսկ դրանք կը վիրաւորէին Նուխում թագաւորող անշարժութեանը ու ծուլութեանը։

«Չը կայ կանոն, ասած է, առանց բացառութեան». Նուխում երեք մարդիք հերոսաբար դէմ դրին մեր այդ ընդհանուր կանոնին և բաւական եռանդ ու շարժողութիւն ցոյց տուին. սրանք մեր ապագայ մահտեսացուներն են, որ մի երեք շաբաթ առաջ արհամարհելով ցուրան ու բուքը ճանապարհ ընկան դէպի Ցուղայի տչխարհը։ Մէկը չը կայ դրանց հարցնող. «անաքանդներ», ախար ոնց չը ծուլացաք, որ այս մահարեր թանգութիւնում ու ցրտերում տեղից շարժվեցիք.....

Ապագայ մահտեսու խեղճ, աղքատ դրացի, դու մի կտոր գարու հացին կարօտ լաց եղիր քո զաւակների հետ, իսկ քո դրացին արտասուքներդ, մահդ չը կամենալով տեսնել, մահ տեսնելու, «մահտեսի» դառնալու համար Երուսաղէմ է վազում..... «Լոյս գերեզմանին» հապա դուր կը գայ այս...

Բայց ես սխալվեցի՝ ասելով, որ անշարժութիւնը ընդհանուր է, բոլորովին մոռացել էի թանգութիւնը, աւազակութիւնը և կարմրուկ հիւանդութիւնը. այո, սրանք, այս երեքը, մեծ շարժողութեան և յառաջադիմութեան մէջ են մեր գաւառում. սրա գնալով՝ գնալով աճում ու աճում են։

Աճող կարմրուկը կարճեցնում է այժմ շատ մանուկների աճող՝ ծաղիկ հասակը և խեղճ ծնողներին զրկում նրանց միակ հարստութիւնից՝ զաւակներից։

Այդ աղքատները լաց են լինում, գուցէ և մրխիթարվում, որովհետև նրանց մինչև այժմ չը տեսնված թանգութիւնից էլ պահելու հնար չունեն։

Էլի փառք Աստուծոյ՝ որ կառավարութեան կարգադրութեամբ սրանց վիճակը փոքր ինչ թեթևանում է. մեր քաղաքի հայ և թուրք աղքատներին նա 10,000 պուդ ցորեն է ընծայել։ Արդէն մէկ ամիս կը լինի, որ այս մասին այստեղից մի հայ և երեք թուրք գնացին Թիֆլիս ցորեն բերելու, եթէ այս խնամքն էլ պակասել էր այդ թշուառ ընտանիքների դլխից, պէտք է որ ընկճվեին նրանք դառն պակասութեան անդութ հարուածների տակ։ Առաջուց էլ կառավարութեան կողմից 1950 պուդ տասը տարի ժամանակով փոխ տրված ալիւրը բաժանվեցաւ հայ և թուրք աղքատների մէջ։ 220 պուդը այդ ալիւրից հասաւ հայ աղքատներին (որոնք ութսուն տնից աւելի են)։ Դրից բերված ցորենների պատճառով մի առ ժամանակ ցորենը այստեղ էժանացաւ, բայց վերջանալուց յետ շուտ էլի թանգացաւ։ Ցորենի պուդը այժմ 3 ր. 50 կոպէկով էլ դժուար է ձեռք բերվում, և այս թանգութեան աճելուն մասամբ օգնում է հաղորդակցութեան դժուարութիւնը՝ ցրտի և չրջակայ բարձր ձիւնի պատճառով։ Շարունակ գետինը ծածկող ձիւնից անասունների կերակուրներն էլ դժուար է գտնել. խոտի պուդը 80 կոպ. է. չը տեսնված գին։ Անասունները նոյնպէս իմացան որ այս տարի մի անպիտան տարի է, խեղճերը. աւելի մատաղ գառները՝ ցրտի և սննդի պակասութիւնից փչանում են։ Փոքր ինչ էլ աւազակութեան մասին։ Չիեր գողանալ, տուն, խանութներ կտրել անպակաս են. դեռ երկու շաբաթ չը կայ՝ որ աւազակները ծակելով խանութի կտուրը՝ պ. Յ. Տ.-Խ-եանցի մինչև երկու հազար արժողութիւն մահուդի և մախմուրի թոփերը տարան։ Գիշերով կատարվող գաղտնի աւազակութիւնների հետ չարունակվում են և ցերեկվայ յայտնի աւազակութիւնները։ Երկու իրանեցիներ (հմշարի) 2 ամիս աւելի մեր գիւղերում մանգալով, սուտ արծաթէ մանէթները թուղթ փողի հետ փոխելով, մի քանի հազարների տէր դառնալով, անյայտանում են։ Մի ջուլամիշեցի հայ է իմանում դրանց խարդախութիւնը (հալելով արծաթէ փողերը) և փրկում խեղճ գիւղացիներին աւելի մեծ կողոպուտից։ Բայց ասում են, որ էլի մէկ 25,000 ռուբլի փոխած են։ Ասում են նոյնպէս, որ մեր յաջորդը մէկը 5 ռուբլով իբրև հնութիւն առած լինի այդ արծաթէ ռուբլիներից մէկը։

Ջ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 1 ապրիլի

Կարդալով ազգային պարբերական թերթերում և «Մշակ» լրագրի № 43 պարոն Կամսարականի հեռագիրը, որ սովը Աղբակում սաստկանում է, ուստի սուրբ պարտք համարելով, կրկին հաւաքեցի 18 ռուբլ. խնդրեմ ստանալով ստորագրողների անունները սպէք ձեր լրագրում։ Եսայի Աւագեանց 1 ր., Մինաս Պատրիանց 1 ր., Մկրտիչ տիրացու Ստեփանեանց 50 կ., Գրիգոր Շահնաբաթեանց 50 կ., Ստեփան Յակոբեանց 1 ր., Ալեքսանդր Տէր-Մկրտչեանց 1 ր., Ամիրաղեանց 1 ր., Սէրգօ Մելիք Աւագեանց 20 կ., Մի ոմն 1 ր., Ալեքսանդր Տէր-Ղևոնդեանց 1 ր., Ղուկաս Ղուկասեանց սալմաստեցի 1 ր., Նիկողոս Նիկողոսեանց 1 ր., Աղասի Մելիք Այվազեանց 1 ր., Յարութիւն Տէր-Օհանեանց 1 ր., Ալահվերդի Օրդուխանով 1 ր., Սհակ Սհակով 1 ր., Գրիգոր Յարութիւնով 1 ր., Մելքօ Տէր-Բարսեղեանց 1 ր., Կարապետ Սհակով 1 ր., Սմբատ Շերմազանով 15 կ., Աւագ և Միքայէլ Սարգիսեանց 20 կ., Ստեփան Զօրեանց 45 կ.։ Ընդամենը 18 ռուբլ։

Ստեփան Զօրեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։

Ֆրանսիական ազգային ժողովի նիստերը նորից սկսվեցան։ Նոքա, ինչպէս երևում է, չափազանց կենդանի, մինչև անգամ աղմկալի կը լինեն։ Կղերականները չափազանց թշնամացած են կառավարութեան հետ և երևի եկող ամառվայ ընթացքում, թէ պատգամաւորների ժողովի և թէ սենատի նրանց կուսակից անդամները կառավարութեանը անդադար հարցեր կառաջարկեն «մարտի հրամանների» առիթով։ «Մարտի հրամաններ» Ֆրանսիայում անուանվում են կառավարութեան այն կարգադրութիւնները, որոնք վերաբերվում են եզուիտներին և հոգևոր միաբանութիւններին։ Ամեն բանից երևում է, որ արգելված միաբանութիւններից շատերը կը հրաժարվին ներկայացնել կառավարութեանը իրանց կանոնադրութիւնները, և եզուիտների հետ կամաւորապէս չեն փակի իրանց ուսումնարանները, իսկ երբ կառավարութիւնը ուժով կը փակի այդ ուսումնարանները, նոքա կառավարութեան դէմ դատ կը սկսեն։ Զանազան մասնաւոր անցքեր, որոնք այդ ժամանակ կը պատահեն, առիթ կը տան պատգամաւորների ժողովի և սենատի կղերական անդամներին կառավարութեանը հարցեր առաջարկելու համար։

Այնուամենայնիւ պէտք է նկատել, որ այդ հարցերը կղերականների համար լաւ հետևանքներ չեն կարող ունենալ։ Պատգամաւորների ժողովի մէջ կղերականները և նրանց բարեկամները աննշան փոքրամասնութիւն են կազմում։ Սենատի մէջ Ֆեբրիի օրէնքի 7-դ յօդուածի քննութեան ժամանակ կղերական արհեստական մեծամասնութիւն կազմվեցաւ, բայց այդ մեծամասնութիւնը այլ ևս չը կայ։ Զափաւոր հանրապետականները, որոնք միացել էին կղերականների հետ հակացել են իրանց սխալը և այլ ևս չեն կամենում ընդդիմադրել կառավարութեանը։ Այդ խումբի առաջնորդ Դիւֆօրը, զոյութիւն ունեցող օրէնքները գործադրելու պատճառով մինիստրութեան վրա յարձակվելը սենատի պահպանողական դերի համար անյարմար է դատում։

Վերջին ժամանակներում ակներև եղաւ, որ եթէ կղերականները կառավարութեանը հարց կառաջարկեն «մարտի հրամանների» առիթով, նոքա փոքրամասնութեան մէջ կը մնան։ Դրանց առաջնորդները, այդ հանգամանքը ի նկատի ունենալով, աւելի լաւ են համարել առ ժամանակ լռել և անցքերի սպասել, մինչև որ կառավարութիւնը որ և է կարգադրութեամբ կը ստիպէ չափաւոր հանրապետականներին նորից միանալ կղերականների հետ։ Կառավարութիւնն էլ, իմանալով այդ հանգամանքը, կաշխատի, որ կը-ղերականների յոյսերը չարդարանան։

Ֆրանսիական պարլամենտական կեանքի մէջ անկասկած շատ աղմուկներ և փոթորիկներ կը լինեն, բայց կղերական այդ կռվից դրական հետևանքների չէ կարելի սպասել։ Այն ժամանակից, ինչ Փիլ Ֆերրի եզուիտների և հոգևոր միաբանութիւնների ուսումնարանների փակելու հարցը բարձրացրել է, բաւական միջոց է անցել և այդ հարցով հետաքրքրված հասարակութիւնը, այսինքն այն ծնողները, որոնց երեխաները սովորում են հոգևորականների ուսումնարաններում, հաշվել են այդ մաքի հետ և համոզվել են, որ իրանց երեխաների ուսումը շարունակելու համար պէտք է ուրիշ հիմնարկութիւններ գտնել։ Այսպիսի պայմանների ժամանակ եթէ կառավարութիւնը, մինչև անգամ ուժով կը փակէ հոգևորականների ուսումնարանները, անբաւականութիւններին առիթ չի տայ։

ՍԵՐԲԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Բէլգրադից։

Հեռագիրը երևի հաղորդեց ձեզ, որ օրերում համաձայնութիւն կայացաւ Վիէննայի և Բէլգրադի կառավարութիւնների մէջ սերբական երկաթուղիների վերաբերութեամբ։ Այդ անվերջանալի գործը վճռվեցաւ օրերումս յօգուտ սերբերի։ Աւստրիական և սերբիական կառավարութիւնների հայացքները այդ գործի վրա բաւական զանազան էին և հարցը լուծելու համար Աւստրիան զիջումներ արաւ։ Աւստրիացիները պնդում էին, որ երկաթուղու գիծը հասցնվի մինչև բոլգարական երկաթուղու գիծը, իսկ սերբները չէին կամենում ընդունել այդ առաջարկութիւնը, որովհետև հաստատ գիտէին, որ Բոլգարիան ոչ թէ միայն իսկոյն չէր կարող սկսել գծի շինութիւնը, այլ մինչև անգամ նշանակված ժամանակամիջոցի մէջ էլ չէր կարող հասցնել։ Այդ պայմանները ի նկատի ունենալով, սերբերը չէին համաձայնում այնպիսի ծախսեր անել, որոնք օգուտ կը տային ոչ թէ սերբիական, այլ աւստրիական արդիւնաբերութեանը։ Աւստրիացիները ամեն տեսակ միջոցներ գործ դրին իրանց նպատակին հասնելու համար, բայց սերբիական հաւատարմատարը չը համաձայնեց կատարել նրանց պահանջը։ Վերջ ի վերջոյ աւստրիական կառավարութիւնը ստիպվեցաւ զիջումներ անել, որոնցով երկու կողմերն էլ բաւական մնացին։

Մի ժամանակ Սերբիան Աւստրո-Ունգարիայից այդ հարի վերաբերութեամբ սաստիկ ընդդիմադրութեան էր ստաստում։ Մի ժամանակ աւստրիական կառավարութիւնը սպառնում էր Սերբիային, որ իր զօրքերով կը գրաւի երկիրը, եթէ Սերբիան չի կատարի նրա պահանջները։ Մի ժամանակ սերբիական առաջին մինիստր Ռիստիչ, որ չէր կամենում ոչինչ զիջումն անել, մտադիր էր հրաժարական տալ և թողնել, որ իր փոխանորդը մերժէր կամ ընդունէր աւստրիացիների պահանջները։ Մի և նոյն ժամանակ Ռիստիչ յայտնում էր, որ ոչ մի մինիստր չէր համաձայնի կատարել Աւստրո-Ունգարիայի պահանջները, որոնք ուղղակի վնաս են հասցնում Սերբիայի շահերին։

Այս հանգամանքները ի նկատի ունենալով, Աւստրո-Ունգարիան լաւ համարեց զիջումներ անել և համաձայնութիւն կայացաւ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 ապրիլի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. մինիստր Տօլստոյ իր խնդիրքի համեմատ արձակված է պաշտօնից։ Սենատոր Պոբեդոնոսցևվին հրամայած է Սինոդի օրեր-պրոկուրորի պաշտօնը վարել։ Դերպտի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Սաբուրով ստատս-սեկրետարի աստիճան է ստացել և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ է նշանակվել։

Կ. ՊՕԼԻՍ, 25 ապրիլի (7 մայիսի)։ Զինուորական դատարանը Կումերաուլի սպանողին մահուան պատժի դատապարտեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 ապրիլի։ Վէյմար և Միկլենբուրգ պետական յանցաւորների գործի քննութիւնը նշանակված է մայիսի 6-ին։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԿԱՅ 1880 ԹՎՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵՍԱՆՔԻՑ

Խեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԻՒՄՐՈՒՆԵՐՈՒՄ այն պարոնների, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մըշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈՐԵՆԻՆ:

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԹՈՑԼՏԻՒԹԵԱՄԲ ԿԸ ԼԻՆԻ

ԱԼԼԷԳՐԻ
ՅՕԳՈՒՏ ՍՈՎԱՏԱՆՋՆԵՐԻ

Մանրամասնութիւնների մասին իր ժամանակին կը յայտնվի: Յանկացողները իրեղէնները ընծայելու կարող են դիմել հետևեալ տիկիններին:

Տիկին Ն. ՎԵՐՄԻՇԵԱՆՑԻՆ Կօլոնիայում սեփական տանը, տիկին Մ. ԴԱՒԹԵԱՆՑԻՆ Շիօեվի տանը Հայոց փողոցում, տիկին Ե. ԲՕՏԻՆԵԱՆԻՆ Սարօ-Ինսարտուտի փողոց, Ղայամաղօվի տանը, տիկին Ն. ԳԱՄԲԱՐՕՎԻՆ իշ. Բէհբութովի տանը, Վօսնեսէնսկի և Գուդովիչ փողոցների անկիւնում, տիկին Մ. ԽՕՍՐՕԵՎԻՆ, Շաղինօվի տանը, Սադովայա փողոցի վրա, տիկին Մ. ԽԱՏԻՍՕՎԻՆ, Գամբարօվի տանը, Լաբօրատորնի փողոցի վրա և նոյնպէս ԾԱՏՈՒՐԵԱՆԻ շամլերի խանութը, Դվորցովի փողոցի վրա:

1—5

Մամուլի տակից դուրս եկաւ գօկաոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Դրամատառանոցում: Գինն է 35 կօպ.

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ վկայական ունի և գիտէ ՌՈՒՍԱՑ, ՖՐԱՆՍԻՍԷՐԷՆ և ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները, դասեր է տալիս: Հասցէն Կամենդանտսկայա փողոց, տուն Շախմուրադովի № 23:

4—4 (2)

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾԱԽՎՈՒՄ է ԹԷ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ և ԹԷ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունեաց: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

5—5

ԵԳՈՐ ԿԱՍՈՒՄՈՎԻ ԵՒ ԸՆԿ.
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Յայտնում է հասարակութեանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5% փոխառութեան տոմսակները յետադարձութեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւէտ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մէջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսակներ: Գրասենեակը գտնվում է Ալէքսանդրեան այգու հանդէպ, Թումանովի տանը:

1—10

ՍԱԼԵԱՆԻՑ նոր ստացվեցաւ ԹԱՐՄ ՀԱՏԻԿԱՒՈՐ ԹԱԻԵԱՐ: Ծախվում է Միքայէլեան ԿԱՄՈՒՐՋԻ վրա, ՄԻՐԶՕԵՎԻ շինութեան մէջ № 11 և 12, Ա. ՄԻՐՈՒՄՈՎԻ խանութում:

5—6

Продается двухъ-этажный домъ на Абасъ-Абатской площади. Объ условіяхъ узнать въ типографіи Меликова, Сололакская улица, № 12.

Ծախվում է երկու յարկանի մի տուն Ս. Բաս-Աբատեան հրապարակի վրա: Պայմանների մասին հարցնել Մելիքովի տպարանում. Սոլոլակայա փողոց, № 12.

3—3

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալեվիչ ներքին հ., Բաթեանց կանանց և երեխաների հ., Քիւչաեանց խիրուրգիական և աչքերի հ., Նատեմբօրսկի վիներական և կաշու հ., տաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգական հ., Վ. զօրօվ վիներական և բոգազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերբիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդկօվսկի ներքին հ., Նատեմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բոգազի հ., Բաթինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Նատեմբօրսկի և Աստվածատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւաւոտեան 0 բրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

Մ. Միանսարեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Հայոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով:

1. Հայկական Ռնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.

4 հազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու:

2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.

1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու:

3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես: 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու: . . . . . 10 կ.

4. Գունատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը: № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստօպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 ստօպ, մօտ 1360 բուբլու: Թերթը մի կոպէկից պակաս:

5. Տողաշարներև տողացանցեր մեծ թաքաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.

6. Կօմբ ուսուցչապետի և անգղիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300: . . . . . 15 կ.

1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 բուբլու:

Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու:

Կարելի է դիմել Ս. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրօնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Դուրս եկաւ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԴԱՇՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՄԲ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուզանաճեանցի: Իւրաքանչիւր օրինակի գինն է մէկ բուբլի: Վաճառվում է յօգուտ Վանայ սովատանջների Թիֆլիսի բոլոր երաժշտական մագազիններում: Գումարող առնողներին զիջումն կը լինի: Օտարաքաղաքացիք դիմում են հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянъ, на Петхайнской улицѣ, собственный домъ № 13. Յանկացողները ստանալ միասին և «Յիսնաղի Տաւիղ» երգարանը, պէտք է ուղարկեն մէկ բուբլ երեսուն կոպ.:

Նիու-Էօռքի Զինգեր

Ամենամեծ կարելու մեքենայի ընկերութեան աշխարհային համբաւն բաւական ըլլալով յանձնել իրեն ձեռագործութիւններն կազմուածքին պարզութեամբը, հաստատութեամբը և այլակերպ աշխատութիւններն կատարելով, տնական և արուեստաւորներու պիտոյից համար, կը համառօտէ զմեզ համրելու մէկիկ մէկիկ իրենց զերազանցութիւնն ուրիշ հնարուած նման արարկայից վրա.

Վերոյիշեալ Նիու Էօռքի Զինկեր ընկերութիւնը այս ապրիլի սկզբներն բացաւ ուրիշ գլխաւոր քաղաքներու պէս, հոս ևս Թիֆլիս շտեմարան մը այլ և այլ կարելու մեքենաներով, Աղամանսկի փողոցն Զուպալովին տունն Երևանի հրապարակի մօտ անմիջապէս և կը խնդրուի խաթունայց և պարոնայց ուզող ըստանալ այսպիսի մեքենայ դիմել հոն միայն և կը խնդրուի միանգամայն չը խառնակել այս ընիկ նորաբաց շտեմարանն ուրիշ վաճառականներու հետ, որոնք միայն Զինկերի սուտ անուամբ նշանակներով և պատկերներով կը խաբեն մեր պաշտպանաւորներն և դժբաղդաբար իրենց մեքենաներով կը տարակուսացուցնեն սեպհական մերոնց լաւութեան անունն.

Ուրիշ քաղաքներու բնակիչք ալ կրնան դիմել մեզ նամակով թէ մեր ընթացիկ գիներուն ցուցակն ուղելու համար, որ կը խրրկենք ձրի և թէ որ և է տեղեկութիւն հարցուցնելու համար, որոնց կը պատասխանենք նմանապէս մի և նոյն լեզուով և կարելի արագութեամբ. մեր երեսաղիրն է:

Г. Нейдлингеръ, Тифлисъ
Գ. Նայդլինկեր

Գլխաւոր հոգաբարձու ամբողջ Ռուսաստանի և միջին Եւրոպայի.

2—3 (2)

Հայ օրիորդ դիպլոմով կամենում է տեղ ստանալ մանկաբարձական տան մէջ, կամ հիւանդանոցում, Տֆխիսում կամ նրա շրջակայքում. հասցէն Петербургъ Новая улица домъ № 7 квартира № 30 Г. Барсамову.

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(РАСПРОДАЖА)

ՎԵՐՋԻՆ ԵՒ ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՏՐԱՍՏ ՇՈՐԵՐԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ ՎՐԱ

ՆԱՍԻԲԵԱՆԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Տրիկօի ամառվայ պալտօ	10 ր. և աւելի
Ժուկեսի ձեռք շորը	10 ր. —
Վիզիտի	15 ր. —
Սև սերտուկի	25 ր. —
Տրիկօի գոյնաւոր վարտիքը	3 ր. —
Սև վարտիքը	7 ր. —
Որսի ժակետ	8 ր. —
Առաւօտվայ ժակետ	8 ր. —
Երեխայոց տրիկօի զգեստը	2 մինչև 14
տարեկան	3 ր. —
Խալաթներ	12 ր. —
Պարուսինի զգեստներ	5 ր. —

Նոյն տեղ ծախվում են կանանց և տղամարդկանց շապիկներ, կալսօններ, կանանց կօֆտաներ, նոյնպէս զիլպաներ, կտաւի մանժէտներ, թաւիներ, թաշկինակներ, ձեռնոցներ, պէնիւարներ և ժիլետներ:

4—10

Տպագրութեան համար պատրաստ են. «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկօտի, «Աբրահամ Լինկօլն ստրուկներին ազատող» Վիլհելմ Հօֆմանի, և Մօլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայթարգմանութիւնները:

Թարգմանվումեն Մօլիէրի հեղ. «Տարտիֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶԱՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվեն ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹԻՒԸ, իմ Նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէքսէլներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, ես անուավեր եմ համարում և ինձ պարտաւորեմ համարում վճարել:

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ:

Дозволено Цензурою 28 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона